



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 15 » 06 2020թ.

№ 08/ԼԱ/ - 72

**Հունիսի 8-ից 14-ը դիտված հիդրոոդերությունաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հունիսի 10-ի և 11-ի ցերեկները, 12-ին հանրապետության առանձին շրջաններում դիտվել է կարճատև անձրև և ամպրպոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Գավառում՝ 23մմ, Շորժայում՝ 22մմ, Մասրիկում՝ 15մմ, մնացած շրջաններում մինչև 7մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 2-4 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում $+34...+36^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ $+32...+34^{\circ}\text{C}$, Տավուշում՝ $+31...+33^{\circ}\text{C}$, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ $+26...+30^{\circ}\text{C}$, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ $+23...+28^{\circ}\text{C}$:

Ամենացածր ջերմաստիճանը Լոռիում գրանցվել է $+5...+10^{\circ}\text{C}$, Սյունիքի նախալեռներում՝ $+7...+12^{\circ}\text{C}$, Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ $+8...+13^{\circ}\text{C}$ (Աշոցքում, Մասրիկում՝ $+4^{\circ}\text{C}$), Տավուշում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ $+12...+15^{\circ}\text{C}$ (Դիլիջանում՝ $+8^{\circ}\text{C}$), Սյունիքի հովիտներում՝ $+13...+18^{\circ}\text{C}$:

Հանրապետության առանձին շրջաններում ամպրոպների ժամանակ դիտվել է քամու ուժգնացում մինչև 24մ/վրկ արագությամբ: Հունիսի 11-ին Գավառում (8մմ), 12-ին՝ Ջերմուկում (15մմ), Սիսիանում (7մմ) դիտվել է կարկուտ:

Ձյան ծածկը պահպանվում է միայն 2800մ-ից բարձր շրջաններում (Արագած բ/լ՝ 4սմ):

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել 1900.82 մ (14.06.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 1սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան